



DOI: 10.59560/18291155-2025.1-158

ՄԻԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ

ՀՀ Սահմանադրական դատարանի
իրավախորհրդարկական վարչության
փորձագիտական-վերլուծական
բաժնի գլխավոր մասնագետ,
Հայ-ռուսական համալսարանի
3-րդ կուրսի ասպիրանտ

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է իրավունքի սկզբունքների դերը վարչական իրավունքում՝ վարչական դատավարությունում դրանց կիրառման շեշտադրումով: Վերլուծության են ենթարկվել վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման տեսական և գործնական ասպեկտները, ներառյալ դրանց իրավական բնույթը, նորմատիվ կարգավիճակը և գործառնությունը: Ներկայացվել են սկզբունքների անմիջական կիրառման հիմնական առանձնահատկությունները, ինչպիսիք են կոմպլեմենտարությունը, նորմատիվ գերակայությունը, կիրառման պարտադիրությունը, ճկունությունը և հարմարվողականությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի պաշտպանության, իրավական բացերի վերացման և օրենքի միատեսակ կիրառման ապահովելու համար վերոնշյալ սկզբունքների կարևորությանը: Ներկայացվել է դատական պրակտիկայի վերլուծություն, որը ցույց է տալիս սկզբունքների արդիականությունը՝ որպես իրավական հիմնավորման և իրավունքի մեկնաբանման գործիք: Հոդվածում հիմնավորվում է վարչական գործընթացներում սկզբունքների անմիջական կիրառման մեխանիզմի հետագա գիտական զարգացման անհրաժեշտությունը՝ իրավակիրառման արդյունավետության բարձրացման և անձանց իրավունքների պաշտպանության համար:

Հիմնաբառեր. նորմ-սկզբունքներ, իրավակիրառ գործունեություն, անմիջական կիրառում, իրավական կայունություն, պարտադիր իրավական ուժ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի սկզբունքների հարցերը հատուկ տեղ են գրավում իրավագիտության և պրակտիկայի մեջ՝ արտացոլելով թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակությունը: Մասնավորապես, վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները շարունակում են հետաքրքրություն առաջացնել որպես գիտական հետազոտությունների առարկա, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ դրանց կիրառման շրջանակներում: Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների տեսության մշակման, զարգացման գործում, չնայած գիտնականների նշանակալի ներդրմանը¹, դեռևս մնում են չլուծված կարևորագույն հարցեր՝ վարչաիրավական սկզբունքների հասկացության, հատկանիշների, շրջանակների, համակարգի, ինչպես նաև նորմատիվ-իրավական ակտերում դրանց ամրագրման առնչությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի իրավակիրառ գործընթացում իրավունքի սկզբունքների օգտագործման խնդիրը: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարաններն իրենց որոշումներում առավել հաճախ են վկայակոչում վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները՝ չունենալով որևէ ուղեցույց սկզբունքների կիրառման առնչությամբ: Սա ընդգծում է դրանց արդիականությունը ոչ միայն որպես տեսական կառուցվածքի, այլև որպես իրավունքի գործնական իրացման գործիքի: Իրավունքի սկզբունքները կիրառվում են տարբեր համատեքստերում՝ փաստարկի ուժեղացման համար, իրավական մեկնաբանության գործընթացում, իրավունքի անալոգիան օգտագործելիս, ինչպես նաև որպես անմիջական գործող նորմեր: Սակայն ո՛չ տեսաիրավական, ո՛չ էլ վարչական իրավունքի դոկտրինը հստակ և ունիվերսալ կանոններ և առաջարկություններ դրանց անմիջական գործածության, կիրառման վերաբերյալ առայժմ չեն ձևավորել: Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների իրավակիրառելիության գիտական իմաստավորումն անհրաժեշտ է, քանզի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսական հիմքի բացակա-

¹ “На основе конкретных дел римские знатоки права формулировали свои взгляды; на основе изучения решений парламента исследователи старого французского права писали свои трактаты; учитывая судебную и иную практику, современные авторы создают необходимые для нашей эпохи новые конструкции в области административного, трудового или делового права. Однако доктрина не считает, что в ее задачу входит лишь изложение и приведение по возможности в порядок созданных практикой положений. Она видит свою роль в выявлении из этой массы, складывавшейся изо дня в день, по воле случая или под давлением какой-то срочной необходимости, четких основополагающих принципов, норм права, которыми в будущем станут руководствоваться судьи и практики”. **Рене Давид**. Основные правовые системы современности, Пункт 70 / Перевод с французского доктора юридических наук, профессора В.А. Туманова. - Москва: Изд. Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>

յության պայմաններում անգամ, գործնականում դրանք արդեն իսկ կիրառվում են:

Դատական որոշումներում իրավունքի սկզբունքների կիրառումը արտացոլում է դրանց գործառնությունների բազմակողմանիությունը: Նախ՝ դրանք ուժեղացնում են պատճառաբանվածությունը, ինչը թույլ է տալիս դատաւաններին հիմնավորել իրենց որոշումները՝ դուրս գալով օրենքի ֆորմալ տեքստի սահմաններից: Երկրորդ՝ սկզբունքներն օգտագործվում են իրավական նորմերի մեկնաբանման¹ գործընթացում, որտեղ դրանք ծառայում են որպես գործիք օրենքի իրական իմաստը² բացահայտելու և իրավական անորոշությունները վերացնելու համար: Երրորդ՝ դրանք առանցքային դեր են խաղում օրենսդրության բացերը հայտնաբերելու գործում՝ հիմք հանդիսանալով իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման համար: Վերջապես՝ նորմ-սկզբունքների անմիջական կիրառումը ցույց է տալիս դատական պրակտիկայում դրանց ինքնուրույն նշանակությունը, ինչը պահանջում է դրանց բնույթի և գործողության մեխանիզմների խորը իմաստավորում³:

Սույն հոդվածը նպատակ ունի հետազոտել իրավունքի սկզբունքների դերը վարչական իրավունքում՝ շեշտը դնելով վարչադատական գործընթացում դրանց կիրառելիության վրա: Այս թեմայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն բացահայտել իրավունքի սկզբունքների նշանակությունը՝ որպես իրավակիրառ գործունեության ունիվերսալ գործիք, այլև բացահայտել դրանց

¹ Харитонов Л.А. Герменевтический подход к толкованию правовых норм // Криминалистъ. 2011. № 1 (8). - С. 114, <https://cyberleninka.ru/article/n/germenevticheskij-podhod-k-tolkovaniju-pravovyh-norm-1>

² “Суслов В.А. в своей работе Герменевтика права // Правоведение. 2001. № 5. – С. 4–12. отмечает, что “прочтение текста закона правоприменителем сопряжено с работой по преодолению смысловой разобщённости между ним и законодателем, а основная работа профессионального юриста как раз и заключается в поиске и реализации смысла текста закона”, “...единственной (врождённой) мотивационной тенденцией, присущей любому юристу-профессионалу (правоприменителю) и всех юристов объединяющей, является стремление к поиску и реализации смысла правовой нормы”. Кожевников В.В. О герменевтическом методе в правоведении. Омский государственный университет им. Ф.М. Достоевского, УДК 340.312, DOI 10.24147/1990-5173.2020.17(1).15-26 // Вестник Омского университета. Серия “Право”. 2020. Т. 17. № 1. - С. 15–26, <https://cyberleninka.ru/article/n/o-germenevticheskom-metode-v-pravovedenii>

³ “В странах романо-германской правовой семьи, напротив, считают, что правовая норма должна оставлять известную свободу судье; ее функцией является лишь установление правовых рамок и директив судье; не следует регламентировать детали, так как создатель правовой нормы (юрист или законодатель) не может точно предусмотреть разнообразие конкретных дел, возникающих в практике”. Рене Давид. Основные правовые системы современности. Пункт 72 / Перевод с французского доктора юридических наук, профессора В.А. Туманова. - Москва: Изд.Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>

ներուժը՝ անձի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի¹ ապահովման գործում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները իրավական հիմնարար կատեգորիա են, որոնք սահմանում են վարչական գործունեության էությունը, բովանդակությունը և ուղղվածությունը: Նրանք հանդես են գալիս ոչ միայն որպես ուղենիշներ պետական մարմինների համար, այլև որպես քաղաքացիների այնպիսի սահմանադրական իրավունքների իրացման երաշխավոր, ինչպիսիք են արդար, ժամանակին և անկողմնակալ վարչարարության իրավունքը: Այս սկզբունքները դնում են իրավակարգի հիմքը, նպաստում պետական ինստիտուտների նկատմամբ վստահության ամրապնդմանը և ապահովում են իրավունքի նորմերի միատեսակ կիրառումը:

Ժամանակակից պայմաններում մեծանում է վարչարարության սկզբունքների կարևորությունը՝ որպես իրավական կարգավորման գործիք, հատկապես, համընթաց հասարակական հարաբերությունների շարունակական զարգացման և բարդացման և օրենսդրական բացերին հաճախակի բխվելու համատեքստում: Սկզբունքների անմիջական կիրառումը թույլ է տալիս հաղթահարել նորմատիվ անորոշությունը և ապահովել վարչաիրավական հարաբերությունների մասնակիցների շահերի հավասարակշռությունը:

Այնուամենայնիվ, չնայած դրանց հիմնարար բնույթին, իրավակիրառ պրակտիկայում ծագում են հարցեր, որոնք կապված են սկզբունքների անմիջական կիրառման հետ: Մասնավորապես, դա վերաբերում է դրանց կարգավիճակին, օգտագործման կարգին և իրավունքի կոնկրետ նորմերի հետ հարաբերակցությանը: Այս ասպեկտների ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի վարչական իրավունքի զարգացման, պետական կառավարման արդյունավետության բարձրացման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար:

Այս հոդվածում ներկայացվում է վարչարարության սկզբունքների իրավական բնույթը, դրանց անմիջական կիրառման պայմաններն ու օրինակները, ինչպես նաև վարչական գործունեության մեջ իրավունքի գերակայության և արդարության ապահովման համար մոտեցումների կարևորությունը:

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները կարելի է դասակարգել՝ *ընդհանուր*, *հատուկ* և *ճյուղային*: Ընդհանուր սկզբունքներն (օրինակ՝ օրինականություն, իրավունքների և ազատությունների ապահովում) ունեն ունիվերսալ բնույթ: Հատուկ սկզբունքները (իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը, վստահության պաշտպանության

¹ ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 06.12.2015 թ. հանրաքվեով / ՀՀՊՏ 2015.12.21, 50-րդ հոդված:

սկզբունքը) նեղ ուղղորդված են, իսկ ճյուղայինները կապված են կոնկրետ իրավահարաբերությունների ոլորտի հետ (հոգուտ ոչ իշխանական շահագրգիռ կողմի իրավունքի մեկնաբանման սկզբունքը՝ հարկային իրավունքում)։

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման սկզբունքների իրավական բնույթը

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման սկզբունքների իրավական բնույթը կայանում է նրանց հատուկ կարգավիճակի մեջ, որպես իրավական ուղենիշներ, որոնք կարող են անմիջականորեն կարգավորել հարաբերությունները՝ շրջանցելով իրավունքի կոնկրետ նորմեր։ Սկզբունքները ոչ միայն լրացնում են գոյություն ունեցող օրենսդրությունը, այլև դառնում են իրավունքի աղբյուր այն իրավիճակներում, երբ օրենսդրական բացերը կամ նորմերի անբավարար մանրամասնությունը խոչընդոտում են հանրային հարաբերությունների լիարժեք կարգավորմանը¹։

Սկզբունքների անմիջական կիրառումն ունի հետևյալ առանցքային ասպեկտները.

1. Կոմպլեմենտար բնույթը: Սկզբունքները գործում են որպես բացերը լրացնելու միջոց՝ ամրապնդելով իրավական կարգավորման արդյունավետությունը։ Դրանք թույլ են տալիս ապահովել վարչական գործընթացի շարունակականությունը կոնկրետ նորմի բացակայության դեպքում։

Այսինքն, վարչարարության սկզբունքները ինտեգրվում են իրավական համակարգում՝ ապահովելով դրա ամբողջականությունը։ Օրինակ, եթե կոնկրետ իրավիճակը չի կարգավորվում հստակ սահմանված նորմով, սկզբունքները կարող են կիրառվել արդար և ողջամիտ որոշում կայացնելու համար։ Նրանք ստեղծում են տրամաբանական և իրավական կապ տարբեր նորմերի միջև՝ ապահովելով նրանց համաձայնեցված կիրառումը։ Սա հատկապես կարևոր է բազմամակարդակ իրավական համակարգում, որտեղ կարող են առաջանալ նորմերի միջև բախումներ։ Սկզբունքները վարչական մարմինների համար ուղենիշ են ծառայում՝ օգնելով ապահովել նրանց գործողությունների իրավաչափությունն ու կանխատեսելիությունը նույնիսկ հստակ նորմերի բացակայության դեպքում։

Վարչարարության սկզբունքների կոմպլեմենտար (փոխլրացնող) բնույթն ունի կարևոր տեսական նշանակություն, քանզի կոմպլեմենտարությունը հաստատում է իրավունքի համակարգային լինելու հայեցակարգը, որտեղ կարգավորման տարբեր իրավական աղբյուրներ և մակարդակներ գործում են որպես մի ամբողջություն²։

¹ Теория государства и права: Учебник / Под ред. В.К. Бабаева. – М.: Юрист, 2003. – С. 375, <https://pravo-olymp.ru/wp-content/uploads/2013/06/babaev.pdf>

² Այս մասին տես՝ **Рене Давид**. Основные правовые системы современности. Пункт 96. Перевод с французского доктора юридических наук, профессора В.А.Туманова. – Москва: Изд. Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>

2. Բարձրագույն նորմատիվ կարգավիճակը¹: Սկզբունքներն օժտված են ունիվերսալ կիրառելիությամբ, դրանց գործողությունը դուրս է գալիս հատուկ օրենքի շրջանակներից, որը նրանց պիտանի է դարձնում ոչ ստանդարտ իրավական իրավիճակները լուծելու համար:

Այսինքն, բարձրագույն նորմատիվ կարգավիճակն ընդգծում է իրավական համակարգում վարչարարության սկզբունքների հատուկ տեղը²: Դրանք օժտված են հատկություններով, որոնք թույլ են տալիս նրանց գործել հատուկ իրավական նորմերից դուրս՝ առանցքային դեր ունենալով ոչ ստանդարտ իրավական իրավիճակներում արդարության³ և կարգուկանոնի ապահովման գործում:

Վարչարարության սկզբունքները կիրառելի են վարչական իրավունքի բոլոր ոլորտներում՝ անկախ հատուկ նորմերի առկայությունից կամ բացակայությունից: Դրանց ունիվերսալ լինելը նշանակում է, որ նրանք ընդգրկում են հարաբերությունների լայն շրջանակ՝ հանդես գալով որպես հենարան նույնիսկ այն իրավիճակների կարգավորման համար, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն օրենսդրությամբ, չեն սահմանափակվում կիրառման նեղ շրջանակով, ինչը նրանց պիտանի է դարձնում ամենատարբեր հանգամանքների համար, ներառյալ բարդ և եզակի դեպքերը:

Սկզբունքները դուրս են գալիս առանձին նորմատիվ ակտերի սահմաններից, քանզի իրենցից ներկայացնում են **ընդհանուր արժեքներ և հիմնա-**

¹ Թեզիսն այն մասին, որ սկզբունքներն օժտված են ունիվերսալ կիրառելիությամբ, նրանց գործողությունը դուրս է գալիս կոնկրետ օրենքի սահմաններից, կարելի է հիմնավորել՝ հղում կատարելով Հանս Կելզենի «Իրավունքի մաքուր ուսուցում» աշխատության վրա, որտեղ նա ընդգծում է, որ բարձրագույն կարգավիճակ ունեցող նորմերը սահմանում են բոլոր ստորադաս նորմերի ուղղությունը: **Кельзен**, Чистое учение о праве (2-е издание. 1960. - С. 329), <https://www.scribd.com/document/387983062/%D0%93%D0%B0%D0%BD%D1%81%D0%9A%D0%B5%D0%BB%D1%8C%D0%B7%D0%B5%D0%BD-%D0%A7%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D0%B5-%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D0%BE%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B5-pd>

² “Право стран романо-германской правовой семьи — это всегда право, базирующееся на принципах, как и требует система. Это не казуистические правовые системы, и поэтому они сохраняют известные преимущества – простоту и ясность”. **Рене Давид**. Основные правовые системы современности. Пункт 74 / Перевод с французского доктора юридических наук, профессора В.А. Туманова. - Москва: Изд. Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>

³ Для устранения пробелов неясностей писанных законов Аристотель обосновал теорию “исправительного права” (исправительной справедливости) или учение о соотношении правосудия и справедливого равенства (пропорциональности). Согласно этой теории, закон воспринимается как воплощение справедливости, однако из-за его возможного несовершенства и пробелов при применении к конкретным жизненным ситуациям судьям предлагалось руководствоваться понятием правды как высшего проявления справедливости, поскольку при тяжбах обращались к посредничеству судьи (dikastes), поскольку они являлись одушевленным правосудием и обеспечивали равенство сторон справедливо. **Аристотель**, Никомахова этика. Книга V [О справедливости]. - С. 84, https://www.civisbook.ru/files/File/Aristotel_Nikomakhova.pdf

րար կանոններ, որոնք ամբողջ իրավական համակարգի հիմքում են: Դա նշանակում է, որ նրանք ունեն գերակայություն լոկալ նորմերի նկատմամբ՝ նրանց միջև բախման դեպքում, կարող են օգտագործվել որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր¹, երբ հատուկ նորմերը բացակայում են կամ դրանց կիրառումը բարդ է:

Սկզբունքները առանցքային դեր են խաղում այն իրավիճակներում, երբ առաջանում է իրավական անորոշություն կամ օրենսդրությունը չի տալիս ուղիղ պատասխան հարցին²: Նրանց բարձրագույն նորմատիվ կարգավիճակը թույլատրում է *հանդես գալ որպես իրավունքի ադապտացման գործիք փոփոխվող պայմանների և նոր մարտահրավերների պարագայում, խուսափել կամայականություններից, քանզի դրանց կիրառումը հիմնված է համընդհանուր ճանաչված իրավական արժեքների վրա:*

Բարձրագույն նորմատիվ կարգավիճակի տեսական նշանակությունը

- Սկզբունքներն ունեն **մետանորմատիվ բնույթ**, այսինքն «վեր են» գտնվում հատուկ նորմերից՝ միացնելով ֆորմալ իրավունքը ընդհանուր իրավական գաղափարների հետ, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը և իրավական որոշակիությունը:

- Դրանք ապահովում են **իրավակիրառելիության ճկունությունը**՝ թույլ տալով դատական և վարչական մարմիններին որոշումները հարմարեցնել հատուկ հանգամանքներին՝ միաժամանակ պահպանելով իրավական կարգավորման ընդհանուր տրամաբանությունն ու նպատակը:

- Դրանց օգտագործումը նպաստում է **իրավական համակարգի ներդաշնակեցմանը**՝ վերացնելով առանձին նորմերի միջև առկա տարաձայնությունները և ստեղծելով համաձայնեցված իրավակիրառ պրակտիկա:

Այսպիսով, վարչարարության սկզբունքների բարձրագույն նորմատիվ կարգավիճակը արտացոլում է ոչ միայն գոյություն ունեցող օրենքները լրացնելու նրանց կարողությունը, այլև անորոշության պայմաններում իրավունքի ինքնուրույն աղբյուր դառնալու: Սա նրանց դարձնում է արդարության հասնելու, իրավական կայունության ապահովման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության անփոխարինելի գործիք:

3. Կիրառման պարտադիր լինելը: Սկզբունքների կիրառման պարտադիր լինելն ընդգծում է, որ վարչարարության սկզբունքները պետք է օգտագործվեն

¹ “Источник права, – т.е. исходная данность права, то, откуда происходит право, то, что создает право, – может быть только правом, поскольку право регулирует свое собственное создание”. Г. Кельзен, Чистое учение о праве (2-е издание, 1960). – С. 316.

² “Закон не может с точностью и вполне обнять превосходнейшее и справедливейшее, чтобы предписывать всем наилучшее”. Из сборника “Сочинения Платона”. Источник: Политик // Сочинения Платона: в 6 т. / Перевод с древнегреческого В.Н. Карпова. – М.: Синодальная типография, 1879. – Т. 6. – С.66-157, [https://ru.wikisource.org/wiki/%D0%9F%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA_\(%D0%9F%D0%BB%D0%B0%D1%82%D0%BE%D0%BD_%D0%9A%D0%B0%D1%80%D0%BF%D0%BE%D0%B2\)](https://ru.wikisource.org/wiki/%D0%9F%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA_(%D0%9F%D0%BB%D0%B0%D1%82%D0%BE%D0%BD_%D0%9A%D0%B0%D1%80%D0%BF%D0%BE%D0%B2))

ոչ թե հայեցողությամբ, այլ որպես իրավաբանորեն անհրաժեշտ գործիք, հատկապես այն իրավիճակներում, երբ դրանց կիրառումը անհրաժեշտ է սահմանադրական իրավունքների պաշտպանության և վարչական իրավահարաբերություններում կողմերի իրավահավասարության ապահովման համար:

Վարչարարության սկզբունքների պարտադիր լինելը նշանակում է, որ դրանք առաջարկություններ կամ ցանկություններ չեն, դրանց կիրառումը սահմանված է իրավական կարգով: Դա պայմանավորված է նրանով, որ *դրանք արտացոլում են իրավական համակարգի հիմնական արժեքները, ինչպիսիք են արդարությունը, բարեխղճությունը և հավասարությունը, դրանց անտեսումը կարող է հանգեցնել վարչական գործընթացներում անարդարության և քաղաքացիների իրավունքների խախտման:*

Ինչ վերաբերում է **սահմանադրական իրավունքների պաշտպանության հետ կապին**, ապա սկզբունքների կիրառումը հատկապես կարևոր է, երբ խոսքը վերաբերում է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների պաշտպանությանը: Նրանք օգնում են *ապահովել այնպիսի իրավունքների իրացումը, ինչպիսիք են պատշաճ վարչարարության իրավունքը, այդ թվում և արդար վարչական վարույթի քննության իրավունքը, օրենքի առջև հավասարությունը և իրավական պաշտպանությունը, հանդես գալ որպես պաշտպանական մեխանիզմ այն դեպքերում, երբ օրենսդրական նորմերը կա՛մ բացակայում են, կա՛մ բավարար չափով չեն պաշտպանում քաղաքացիների իրավունքները*¹:

Սկզբունքները երաշխավորում են վարչական իրավահարաբերություններում կողմերի միջև իրավահավասարության ապահովումը. անկախ նրանց կարգավիճակից, հնարավորություններից և ռեսուրսներից նրանք գտնվում են հավասար պայմաններում: Դա ձեռք է բերվում *վարչական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների նկատմամբ հավասարության սկզբունքի կիրառմամբ, վարչական մարմինների մոտեցման անհիմն տարբերությունների կամ խտրականության բացառմամբ:*

Սկզբունքները կիրառվում են իրենց նորմատիվ ուժով, այլ ոչ թե պետաիշխանական մարմնի ցանկությունից կամ հարմարությունից ելնելով: Դա նշանակում է, որ *վարչական մարմինները պարտավոր են որոշումներ կայացնելիս հաշվի առնել սկզբունքները, հատկապես բարդ կամ վիճելի իրավի-*

¹ “Подобное преодоление отрицательных последствий общего характера закона Аристотель называл правдой. “Такова природа правды; она заключается в исправлении закона в тех случаях, где он, вследствие своей общности, неудовлетворителен”. **Нерсисянц В.С.** Философия права: Учебник для вузов. - М.: Норма, 2005. - С. 286, УДК 1(075.8) ББК 87я73 Н54, <https://artsakhlib.am/wpcontent/uploads/2020/03/%D0%92%D0%BB%D0%B0%D0%B4%D0%B8%D0%BA-%D0%9D%D0%B5%D1%80%D1%81%D0%B5%D1%81%D1%8F%D0%BD%D1%86%D0%A4%D0%B8%D0%BB%D0%BE%D1%81%D0%BE%D1%84%D0%B8%D1%8F-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0-1.pdf>

ճակներում, սկզբունքների անտեսումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտն ապօրինի ճանաչելու համար:

Կիրառման պարտադիր լինելու տեսական նշանակությունը

- **Սկզբունքները՝ որպես իրավակիրառման ստանդարտ**, հանդես են գալիս որպես չափանիշ, որով գնահատվում է վարչական մարմինների որոշումների օրինականությունն ու պատճառաբանվածությունը:

- **Իրավական կարգի երաշխիք**. սկզբունքները կանխում են իրավունքի կամայական կիրառումը՝ ապահովելով վարչական գործընթացների կայունությունն ու կանխատեսելիությունը:

- **Ունիվերսալ կարգավորիչ**. դրանց պարտադիր կիրառումը հավասարակշռում է առանձին նորմերի միջև եղած տարբերությունները՝ վերացնելով իրավունքի բացերն ու կոլիզիաները:

Այսպիսով, սկզբունքների պարտադիր կիրառումն ընդգծում է դրանց դերը որպես հիմնարար իրավական ուղենիշներ, որոնք ապահովում են քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, վարչական գործընթացի իրավահավասարությունն ու կայունությունը (Rechtssicherheit): Դրանք չեն կարող անտեսվել կամ ընտրողաբար օգտագործվել, քանզի դրանց կիրառումը իրավունքի գերակայության և արդարության պահպանման անհրաժեշտ պայման է:

4. Ճկունությունը և հարմարվողականությունն² ընդգծում է վարչարարության սկզբունքների դինամիկ բնույթը, որոնք կարող են փոխել իրենց բովանդակությունն ու կիրառման եղանակը՝ կախված կոնկրետ գործի առանձնահատկություններից: Այս հատկությունները սկզբունքները դարձնում են անփոխարինելի գործիքներ իրավակիրառ պրակտիկայում, հատկապես բարդ և եզակի իրավիճակներում:

Ճկունությունը՝ որպես մեկնաբանման հնարավորություն: Սկզբունքները չեն ներառում խիստ ամրագրված կանոններ, այլ ընդհանուր ուղեցույց են, որը կարող է հարմարեցվել հատուկ հանգամանքներին: Այն թույլ է տալիս *օգտագործել սկզբունքները տարբեր իրավական համատեքստերում՝ չխախտելով դրանց էությունը, կիրառել դրանք նոր և ոչ ստանդարտ իրավիճակների համար, որոնք նախատեսված չեն եղել ֆորմալ նորմերի մշակման ժամանակ*³:

¹ **Карл-Петер Зоммерманн**, Принципы административного права // ДПП ИМП 1(2016). - С. 63, https://dpp.mpil.de/05_2016/05_2016_41_86.pdf

² См. там же. - С. 83.

³ “Другие же из неписаных законов восполняют недостатки частного писаного закона, так как правда, относясь, по-видимому, к области справедливого, есть то, что справедливо вопреки закону. Подобные недостатки писаного закона допускаются законодателями иногда добровольно, а иногда и против воли; против воли, когда [недостатки закона] ускользают от их внимания, добровольно, – когда они не могут дать никакого предписания относительно данного случая, потому что их определения должны отличаться характером всеобщности, а данный случай касается не того, что бывает всегда, но того, что случается по большей части”. **Аристотель**,

Գործի առանձնահատկություններին հարմարվողականությունը: Սկզբունքների հարմարվողականությունը նշանակում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի եզակի հանգամանքները հաշվի առնելու նրանց կարողությունը: Այն թույլ է տալիս խուսափել կաղապարային մոտեցումից, որը կարող է անարդար լինել որոշակի իրավիճակներում, հաշվի առնել բազմաթիվ գործոններ (սոցիալական, տնտեսական, բարոյական և այլն), որոնք ազդում են իրավակիրառ գործունեության վրա:

Սկզբունքների արդիականության ապահովում: Իրենց ճկունության և հարմարվողականության շնորհիվ սկզբունքները պահպանում են իրենց արդիականությունը նույնիսկ արագ փոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Դա ձեռք է բերվում դրանց բովանդակության վերանայման հնարավորությամբ՝ հաշվի առնելով նոր մարտահրավերներն ու պայմանները, նորմատիվ բազայի փոփոխությանը հարմարվելով, ինչը նրանց իրավական բարեփոխումների նկատմամբ դարձնում է կայուն:

Հակազդեցությունը ֆորմալիզմին: Սկզբունքների ճկունությունը օգնում է հաղթահարել չափազանց ֆորմալ մոտեցման թերությունները, որոնք կարող են հանգեցնել անարդար կամ անտրամաբանական արդյունքների: Դա սկզբունքները դարձնում է արդարության ապահովման գործիք, որը դուրս է գալիս նորմերի մեխանիկական կիրառման սահմաններից, օրենքի խիստ պահպանման և մարդկային գործոնը հաշվի առնելու անհրաժեշտության միջև հավասարակշռություն գտնելու միջոց:

Ճկունության և հարմարվողականության տեսական նշանակությունը

- **Սկզբունքները որպես «կենդանի իրավունք»** զարգանում են հասարակության հետ միասին՝ պահպանելով իրավական համակարգի և իրական կյանքի միջև կապը:

- **Կամուրջ է ֆորմալ և ոչ ֆորմալ իրավունքի միջև.**¹ սկզբունքները թույլ են տալիս միացնել օրենքի նորմատիվային խստությունը նրա սոցիալական գործառույթի հետ:

- **Արդար իրավակիրառման գործիք է.** սկզբունքների ճկունությունն ապահովում է անհատական մոտեցում յուրաքանչյուր դեպքի նկատմամբ՝ կանխելով նորմերի ունիվերսալ կիրառման հետ կապված սխալները:

Այսպիսով, սկզբունքների ճկունությունն ու հարմարվողականությունն ընդգծում է կախված հանգամանքներից կիրառման եղանակը փոխելու նրանց

Риторика. Книга 1, Глава 13. - С. 6, ISBN: 978-5-17-102258-7 / Перевод с древнегреческого Н. Платонова, 2017, <https://www.litres.ru/book/aristotel/ritorika-24126156/chitat-onlayn/?page=6>

¹ “Использование общих принципов и формул также может в некоторых правовых системах служить для того, чтобы подправить в ту или иную сторону формальную норму действующего права”. **Рене Давид.** Основные правовые системы современности. Пункт 11 / Перевод с французского доктора юридических наук, профессора В.А. Туманова. - Москва: Изд. Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>

կարողությունը՝ միաժամանակ պահպանելով իրենց հիմնական էությունը: Սա նրանց դարձնում է արդյունավետ գործիք ոչ ստանդարտ և բարդ իրավական իրավիճակները լուծելու համար, ինչպես նաև ամրապնդում է նրանց կարևորությունը որպես ունիվերսալ մեխանիզմ, որն ունակ է ադապտացվել օրենքում և հասարակությունում կատարվող փոփոխություններին:

5. Sui generis¹ նորմեր. Sui generis տերմինը (լատիներենից բառացիորեն թարգմանաբար նշանակում է «իր տեսակի մեջ» կամ «յուրահատուկ իր հատկանիշներով»², «եզակի») ընդգծում է վարչարարության սկզբունքների հատուկ բնույթը որպես իրավական կատեգորիաներ, որոնք միաժամանակ կատարում են իրավունքի նորմերի և առաջնորդող դրույթների գործառույթները: Նրանց յուրահատկությունը պայմանավորված է նորմատիվ և արժեքային բնութագրերի համադրությամբ, ինչը նրանց դարձնում է իրավակիրառ պրակտիկայի կարևոր գործիքներ: «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին» տրամադրեց հատուկ տեսակի իրավունքներ՝ «sui generis» - տվյալների բազաների նկատմամբ, որոնցում կատարվել են զգալի ֆինանսական կամ այլ ներդրումներ:

Հիմնական ասպեկտներ են.

Եզակի իրավական կարգավիճակ. վարչարարության սկզբունքները միջանկյալ դիրք են գրավում իրավունքի ֆորմալ նորմերի և իրավական արևտրակտ գաղափարների միջև: Դա նշանակում է՝ *սկզբունքներն ունեն պարտադիր իրավական ուժ, ինչը թույլ է տալիս օգտագործել դրանք որպես հիմք որոշումների կայացման համար. սկզբունքների բովանդակությունը մնում է բավականաչափ լայն՝ տարբեր հանգամանքներ և մեկնաբանություններ հաշվի առնելու համար:*

Նորմատիվ-արժեքային բնույթ. սկզբունքները ոչ միայն սահմանում են վարքագծի կանոններ, այլև արտացոլում են իրավական համակարգի հիմնարար արժեքները, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը և համաչափությունը: Այն թույլ է տալիս *իրավունքի նորմերի իրավական*

¹ Sui generis արտահայտությունը հաճախ օգտագործվում է որևէ գաղափար, էություն կամ երևույթ նշելու համար, որը չի կարող ներառվել ավելի ընդհանուր հասկացության մեջ: Իրավունքում sui generis-ը իրավական հասկացություն է, որը կիրառելի է ցանկացած գործում, որն իր եզակիության պատճառով պահանջում է հատուկ և եզակի մեկնաբանություն: Օրինակ՝ «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին» 96/9/EC տրամադրեց հատուկ տեսակի իրավունքներ՝ «sui generis» - տվյալների բազաների նկատմամբ, որոնցում կատարվել են զգալի ֆինանսական կամ այլ ներդրումներ: Directive 96/9/EC of the European Parliament and of the Council of 11 March 1996 on the legal protection of databases, Document 31996L0009, Official Journal of the European Communities L 77/20, 27.3.1996, CHAPTER III SUI GENERIS RIGHT, <http://data.europa.eu/eli/dir/1996/9/oj>

² The Oxford English Dictionary / J. Simpson, E. Weiner (eds.). – 2nd ed. – United Kingdom, 1989. – P. 757, The New Dictionary of Cultural Literacy. — Houghton Mifflin Harcourt, 2002. — P. 79. — ISBN 0618226478, ISBN 9780618226474

արժեքներին համապատասխանությունը գնահատելու համար օգտագործել սկզբունքները, կիրառել սկզբունքները որպես ստանդարտ՝ պետաշխատական մարմինների գործողությունների օրինականությունը ստուգելու համար:

Ճկունությունն ու ունիվերսալ լինելը. որպես *sui generis* նորմեր՝ սկզբունքները կիրառելի են տարբեր իրավական համակարգերում և կոնտեքստներում: Նրանց ճկունությունը թույլ է տալիս ընդգրկել իրավական հարաբերությունների լայն շրջանակ, հաշվի առնել հատուկ իրավիճակների առանձնահատկությունները:

Իրավունքի էվոլյուցիոն զարգացումը. սկզբունքները՝ որպես *sui generis* նորմեր, հանդես են գալիս որպես իրավական զարգացման շարժիչ՝ ապահովելով իրավական համակարգի դինամիկան: Նրանք հիմք են ստեղծում նոր նորմերի և դոկտրինների ստեղծման համար, ապահովում են իրավունքի, արժեքների և փոփոխվող սոցիալական իրականության միջև կապը:

Sui generis նորմերի տեսական նշանակությունը

- **Իրավական եզակի գործիք** լինելով՝ սկզբունքները համատեղում են իրավունքի նորմի գործառույթներն ու իրավական արժեքները:

- **Արժեքային կողմնորոշում**. սկզբունքներն արտացոլում են առանցքային իրավական արժեքները, ինչը նրանց դարձնում է օրինականության գնահատման չափանիշ:

- **Իրավական զարգացումը**. սկզբունքներն ապահովում են իրավական համակարգի էվոլյուցիան՝ հիմք ձևավորելով նոր նորմերի և ստանդարտների համար:

Այսպիսով, սկզբունքները՝ որպես *sui generis* նորմեր, կարևոր դեր են խաղում իրավունքի զարգացման և իրավակիրառման հարցում՝ համատեղելով բազմակողմանիությունը, ճկունությունը և արժեքային բնույթը:

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման պայմանները.

Սկզբունքները կարող են անմիջականորեն կիրառվել հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության պարագայում.

- *Օրենսդրական բաց.*¹ Եթե բացակայում է վիճելի հարաբերությունները կարգավորող իրավունքի կոնկրետ նորմը, ապա սկզբունքը հիմք է դառնում որոշում կայացնելու համար: Տեսականորեն այս մոտեցումը հիմնված է նորմատիվ բազմակարծության հայեցակարգի վրա, որտեղ սկզբունքները կապող օղակ են հանդիսանում ֆորմալ ամրագրված նորմերի և ոչ ստանդարտ իրավիճակներում դրանց կոնկրետացման անհրաժեշտության միջև²:

- *Հակասությունների առկայություն*. սկզբունքների կիրառումը պետք է համապատասխանի գործող իրավունքի նորմերին և ընդհանուր իրավական

¹ Кельзен Г. Чистое учение о праве (2-е издание), 1960. - С. 305-316.

² “Надо принять то, что после разума находится на втором месте, - закон и порядок, которые охватывают своим взором многое, но не могут охватить всего”. Платон, Законы. Книга 10. - С. 35, https://www.civisbook.ru/files/File/Platon_Lows.pdf

համակարգին՝ խուսափելով դրա հիմնարար դրույթների հետ բախումից: Այս պայմանը հաստատում է իրավական աղբյուրների համաձայնեցվածության գաղափարը, որտեղ սկզբունքները դառնում են իրավական կարգավորման կառուցվածքային միասնության տարր¹:

- *Իրավունքների և ազատությունների գերակայության ապահովում.* սկզբունքների անմիջական կիրառումը ենթադրում է, որ ուշադրության կենտրոնում են մարդու իրավունքներն ու ազատությունները: Սա արտացոլում է օրենքում «մարդակենտրոնության» տեսական հայեցակարգը², որտեղ սկզբունքները պաշտպանական մեխանիզմի դեր են խաղում արդարության և իրավական անվտանգության ապահովման համար:

- *Սուբսիդիարման սկզբունքը*³. սկզբունքները պետք է կիրառվեն այն ժամանակ, երբ ֆորմալ նորմերը բավարար հիմք չեն տրամադրում իրավիճակը լուծելու համար: Տեսականորեն, այս պայմանը հիմնված է սուբսիդիար դոկտրինի վրա, որն ընդգծում է սկզբունքների օժանդակ դերը ամրագրված իրավունքի գերակայությունը պահպանելու գործում⁴:

- *Իրավական որոշակիության ապահովում.* սկզբունքների կիրառումը պետք է ապահովի վարչական գործընթացի կանխատեսելիությունը և բացառի կամայականությունը: Այս պայմանը կապված է իրավական որոշակիության տեսության հետ, որտեղ սկզբունքները ծառայում են որպես ուղեցույց արդար լուծում մշակելու համար⁵:

Անմիջական կիրառման օրինակներ

ՎԴ/6443/05/14 վարչական գործով վարչական դատարանը օրենսդրական կարգավորման բացակայության դեպքում անմիջականորեն կիրառել է

¹ Այս մասին տես՝ **Васильева А.Ф.** 2024. “Кодификация общих принципов административного права”. Вестник Санкт-Петербургского университета. Право 3: 617–635, <https://doi.org/10.21638/spbu14.2024.305>, <file:///C:/Users/PC-3/Downloads/617-635.pdf>

² Այս մասին տես՝ **Шамшурин В.И.** О политике, праве и религии (антропоцентризм в теории и практике). Часть 1, Серия “Политология. Религиоведение”. 2010. № 2 (5). – С. 123–130, <https://cyberleninka.ru/article/n/o-politike-prave-i-religii-antropotsentrizm-v-teorii-i-praktike-chast-1> Московский государственный университет им. М. В. Ломоносова, г. Москва.

³ Այս մասին տես՝ **Михалева Т.Н.** Принцип субсидиарности в праве европейского союза: предел наднациональности или ее развитие? Минск: БГУ, 2016. – С. 145-155, <https://elib.bsu.by/handle/123456789/172850> <https://elib.bsu.by/bitstream/123456789/172850/1/145-155.pdf>

⁴ Այս մասին տես՝ **Грачева С.А.** Конституционный путь к доктрине субсидиарности в международном праве. DOI: 10.12737/jflcl.2020.001, Journal of Foreign Legislation and Comparative Law, 2020, no. 1, <https://cyberleninka.ru/article/n/konstitutsionnyy-put-k-doktrine-subsidiarnosti-v-mezhdunarodnom-prave>

⁵ Այս մասին տես՝ **Васильева А.Ф.** 2024. “Кодификация общих принципов административного права”. Вестник Санкт-Петербургского университета. Право 3: 617–635, <https://doi.org/10.21638/spbu14.2024.305>, <file:///C:/Users/PC-3/Downloads/617-635.pdf>

օրինականության սկզբունքը՝ արձանագրելով հետևյալը. «(...) Հայաստանի Հանրապետությունը (...) ունի պարտավորություն ապահովելու և պաշտպանելու այն մարդկանց սոցիալական իրավունքները, որոնք գտնվում են իր իրավագործության ներքո: (...) Տվյալ դեպքում հայցվորը, ունենալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք, իրավունք ունի նաև Հայաստանի Հանրապետությունից պահանջելու, որպեսզի ապահովվի նաև իր ակնկալիքը ստանալու այնպիսի կենսաթոշակ, որում հաշվի կառնվեն (...) համաձայնագրով նախատեսված գումարները: Այս հարցում էական է ոչ թե Խորհրդային Միության պարտավորությունների իրավահաջորդության կամ արտաքին պարտքի խնդիրը, այլ մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, որը պետք է Հայաստանի Հանրապետությունն ապահովի անվերապահորեն:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը կրում է պարտավորություն ապահովելու հայցվորի իրավունքը՝ ստանալու այնպիսի կենսաթոշակ, որում հաշվի կառնվեն Միավորված ազգերի կազմակերպության Անձնակազմի միացյալ կենսաթոշակային հիմնադրամին կատարած վճարները: (...) Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում Միավորված ազգերի կազմակերպության Անձնակազմի միացյալ կենսաթոշակային հիմնադրամին կատարած վճարները կենսաթոշակում հաշվառելու կարգ: Գործող օրենսդրության հիման վրա հնարավոր չէ պարզել, թե այս պարագայում հայցվորին ինչ տեսակի և ինչ չափի կենսաթոշակ պետք է նշանակվի: (...) Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն այս հարցում ի սպառ լուծում է:

Սակայն այս հանգամանքը նույնպես խոչընդոտ չէ դատարանի համար պարտավորեցնելու նշանակել այնպիսի կենսաթոշակ, որում կներառվի հայցվորի կատարած վճարները: Դատարանը, հանդիսանալով արդարադատություն իրականացնող մարմին, կաշկանդված չէ մարդու իրավունքի վերականգնման եղանակով: Յուրաքանչյուր գործ քննելիս դատարանը պետք է պարզի, թե արդյոք խախտվել է հայցվորի որևէ իրավունք և ապահովվի դրա պաշտպանությունը: Նշվածը բխում է արդարադատության (այդ թվում՝ վարչական) հայեցակարգից:

Սա նշանակում է, որ դատարանը, հաստատելով, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ապահովել հայցվորի իրավունքը, կարող է պարտավորեցնել իրավասու վարչական մարմնին նշանակելու հայցվորի նկատմամբ կենսաթոշակն այնպես, որ հաշվի առնվի վերջինիս կուտակած վճարումները: Իսկ դատական ակտի կատարման խնդիրն արդեն համապատասխան վարչական մարմնի լուծման դաշտում է, որը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ և հնարավոր միջոցները վերականգնելու հայցվորի խախտված իրավունքը: Այսպիսով, բոլոր հանգամանքների քննարկումից

հեղուկ պարզ է դառնում, որ հայցվորի պահանջն ամբողջությամբ հիմնավոր է և ենթակա է բավարարման»¹:

ՎԴ/14835/05/24 վարչական գործով վարչական դատարանը՝ հայցվորի դիմումը վերադարձնելու մասին 02.12.2024 թ. որոշման մեջ՝ օրենսդրական կարգավորումներում առկա հակասությունների հաղթահարման նպատակով (եթե կոլիզիան հնարավոր չէ լուծել կոլիզիայի հաղթահարման կանոններով) անմիջականորեն կիրառել է **իրավունքի որոշակիության, իրավական անվտանգության, խտրականության արգելքի սկզբունքները** և արձանագրել հետևյալը. «Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատարան դիմելու համար ժամկետային տարբեր կարգավորումներ է սահմանել նույն դեպքի և սուբյեկտների համար՝ մի կողմից դատարան դիմելու իրավունքի իրացումը հատկորոշված սուբյեկտների համար պայմանավորելով նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետով և միաժամանակ մյուս կողմից նույն սուբյեկտների համար նորմատիվ իրավական ակտի վիճարկման համար դատարան դիմելու իրավունքի իրացումը չպայմանավորելով որևէ ժամկետով: Նման պայմաններում կարելի է պնդել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ամրագրված կարգավորումներում առկա է հակասություն: (...)

Սույն դեպքում, հաշվի առնելով, որ գործ ունենք միևնույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմերի հետ, որոնք ամրագրված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նույն հոդվածում, ուժի մեջ են մտել միաժամանակ, իսկ դիմումատուին պետական մարմին է, դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ մասի միջև առկա հակասությունը հնարավոր չէ լուծել Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կանոններով: (...)

Այսպես, վերը նշված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի մեջ առկա հակասությունը քննարկելով իրավական որոշակիության և իրավական անվտանգության սկզբունքների համապետքստությամբ՝ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: (...) անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության

¹ ՎԴ/6443/05/14 վարչական գործով 29.10.2015 թ. կայացված վճիռ,
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809879264

օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի մեջ առկա հակասությանը՝ դատարանն արձանագրում է, դատարան դիմելու իրավունքի իրացումը հատկապես սուբյեկտների համար մի դեպքում պայմանավորելով նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետով՝ Օրենսդիրը իրավական որոշակիության սկզբունքի համապատասխան իրավաչափորեն կանխատեսելի է դարձրել իշխանության կրողների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարքագիծը՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (քաղաքի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելիս: Ընդ որում, հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վիճարկման դատավարական ժամկետներին, հարկ է ընդգծել, որ այս համապատասխանությունը առավել քան պետք է որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումներ, այդ թվում՝ դատավարական ժամկետներ լինեն այդպիսի ակտերի վիճարկման համար, որը և սահմանված է հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասում: (...)»¹:

ՎԴ/2847/05/24 վարչական գործով վարչական դատարանը անմիջականորեն կիրառել է **հայեցողական լիազորությունները չարաշահելու սկզբունքը** և **համաչափության սկզբունքը**, որոնք օժանդակող դերակատարում են ունեցել համապատասխան դրույթով սահմանված նվազագույն և առավելագույն տուգանքի շեմի ընտրության հարցում և արձանագրել հետևյալը. «(...) Տվյալ դեպքում, հայցվորը պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասով, որի սանկցիայով նախատեսված է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: (...)

¹ ՎԴ/14835/05/24 վարչական գործով 02.12.2024 թ. դիմումը վերադարձնելու մասին որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810010184

Տվյալ դեպքում, վարչական մարմինը կայացնելով 19.12.2023 թ. թիվ Վ-49/49 որոշումը, ընտրել է 700.000 դրամի չափով տուգանք կիրառելու վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն լուծումը, այսինքն, չի ընտրել վարչական պատասխանատվության նվազագույն չափը, սակայն վիճարկվող որոշմամբ առկա չէ որևէ նշում՝ նշված ընտրության հիմքում ընկած դրդապատճառների մասին, վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների մասին, ինչպես նաև դրանով որևէ կերպ չի հիմնավորվում նաև այն հանգամանքը, որ նշված նորմի սանկցիայով տրված նշված չափի ընտրությունը նախատեսել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակներից որևէ մեկը: Ավելին, վիճարկվող վարչական ակտում պատասխանողը հենց ինքն է արձանագրել, որ տվյալ պարագայում առկա չեն պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ, ուստի նշված հանգամանքը հիմք է հայցադիմումով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար: Ամբողջ վերոնշյալից ելնելով, դատարանը եզրահանգում է, որ սույն հայցով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենսդրության վերը նշված պահանջների խախտմամբ, որպիսի խախտումը հիմք է գործով վիճարկվող՝ Երևանի քաղաքապետարանի թիվ Վ-49/49 վարչական ակտն անվավեր ճանաչելու համար, հետևաբար հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման:»¹:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման իրավական բնույթն ընդգծում է դրանց կարևորությունը որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր, որը կարող է լրացնել նորմատիվ կարգավորման թերությունները: Նրանք հանդես են գալիս որպես ունիվերսալ գործիք՝ վարչական գործընթացներում նորմատիվ որոշակիության և արդարության միջև հավասարակշռություն ապահովելու համար:

Տեսականորեն, սկզբունքների անմիջական կիրառումը դինամիկ կարգավորման ձև է, որտեղ շեշտը դրվում է իրավական արժեքների ճկունության, հարմարվողականության և առաջնահերթության վրա²: Սա թույլ է տալիս սկզբունքներին գործել ոչ միայն որպես առաջնորդող դրույթներ, այլև որպես իրավական նորմեր, որոնք ունեն պարտադիր իրավաբանական ուժ: Այս մեկնաբանությունը շեշտում է նրանց երկակի բնույթը՝ մի կողմից, ուղղված են իրա-

¹ ՎԴ/2847/05/24 վարչական գործով 11.12.2024թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809995131

² «Динамическая теория права изучает правовые нормы — а именно те, которые регулируют создание и применение права», Кельзен Г. Чистое учение о праве (2-е издание), 1960. - С. 94.

վական համակարգի կայունությանը աջակցելուն, մյուս կողմից՝ ապահովում են դրա էվոլյուցիան՝ ի պատասխան փոփոխվող սոցիալական մարտահրավերների:

Սկզբունքների անմիջական կիրառումը ոչ միայն նպաստում է իրավունքի բացերի և կոլիզիաների հաղթահարմանը, այլև ամրապնդում է վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ: Երկարաժամկետ հեռանկարում այն նպաստում է վարչական իրավունքի զարգացմանը, կառավարման ավելի արդար և արդյունավետ համակարգի ձևավորմանը, որտեղ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները գտնվում են իրավակիրառ գործունեության կենտրոնում: Սա վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները դարձնում է իրավունքի գերակայության ապահովման և սահմանադրական արժեքների իրացման մեխանիզմի անբաժանելի մաս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015 թ. հանրաքվեով / ՀՀՊՏ 2015.12.21:

2. Directive 96/9/EC of the European Parliament and of the Council of 11 March 1996 on the legal protection of databases, Document 31996L0009, Official Journal of the European Communities L 77/20, 27.3.1996, CHAPTER III SUI GENERIS RIGHT, <http://data.europa.eu/eli/dir/1996/9/oj>

Գիտական գրականություն

1. **Аристотель.** Никомахова этика. Книга V [О справедливости], https://www.civisbook.ru/files/File/Aristotel_Nikomakhova.pdf

2. **Аристотель.** Риторика., Книга 1, Глава 13, стр. 6, ISBN: 978-5-17-102258-7, перевод с древнегреческого Н. Платонова, 2017, <https://www.litres.ru/book/aristotel/ritorika-24126156/chitat-onlayn/?page=6>

3. **Васильева А.Ф.** 2024. “Кодификация общих принципов административного права”. Вестник Санкт-Петербургского университета. Право 3: 617–635. <https://doi.org/10.21638/spbu14.2024.305>, <file:///C:/Users/PC-3/Downloads/617-635.pdf>

4. **Кожевников В.В.** О герменевтическом методе в правоведении. Омский государственный университет им. Ф.М. Достоевского, УДК 340.312, DOI 10.24147/1990-5173.2020.17(1).15-26 // Вестник Омского университета. Серия "Право". 2020. Т. 17, № 1, <https://cyberleninka.ru/article/n/o-germenevticheskom-metode-v-pravovedenii>

5. **Кельзен Г.** Чистое учение о праве (2-е издание, 1960. - С. 94, 305-316, 329), <https://www.scribd.com/document/387983062/%D0%93%D0%B0%D0%BD%D1%81-%D0%9A%D0%B5%D0%BB%D1%8C%D0%B7%D0%B5%D0%BD%D0%A7%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D0%B5%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D0%BE-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B5-pd>
6. **Грачева С.А.** Конституционный путь к доктрине субсидиарности в международном праве. DOI: 10.12737/jfcl.2020.001, Journal of Foreign Legislation and Comparative Law, 2020, no. 1, <https://cyberleninka.ru/article/n/konstitutsionnyy-put-k-doktrine-subsidiarnosti-v-mezhdunarodnom-prave>
7. **Карл-Петер Зоммерманн**, Принципы административного права // ДПП ИМП 1(2016), https://dpp.mpil.de/05_2016/05_2016_41_86.pdf
8. **Михалева Т.Н.** Принцип субсидиарности в праве европейского союза: предел наднациональности или ее развитие? Минск: БГУ, 2016, <https://elib.bsu.by/handle/123456789/172850>, <https://elib.bsu.by/bitstream/123456789/172850/1/145-155.pdf>
9. **Нерсисянц В.С.** Философия права: Учебник для вузов. - М.: Норма, 2005. УДК 1(075.8) ББК 87я73 Н54, <https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/03/%D0%92%D0%BB%D0%B0%D0%B4%D0%B8%D0%BA-%D0%9D%D0%B5%D1%80%D1%81%D0%B5%D1%81%D1%8F%D0%BD%D1%86-%D0%A4%D0%B8%D0%BB%D0%BE%D1%81%D0%BE%D1%84%D0%B8%D1%8F-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0-1.pdf>
10. **Платон.** Законы. Книга 10, https://www.civisbook.ru/files/File/Platon_Lows.pdf
11. **Платон.** Политик. Из сборника “Сочинения Платона”: в 6 т. / Перевод с древнегреческого В. Н. Карпова. - М.: Синодальная типография, 1879. - Т.6.
12. **Давид Р.** Основные правовые системы современности // Перевод с французского доктора юридических наук, профессора В.А. Туманова. - Москва: Изд. Прогресс, 1988 г., <https://lib.ru/PRAWO/rene.txt>
13. Теория государства и права: Учебник / Под ред. В.К. Бабаева. - М.: Юрист, 2003, <https://pravo-olymp.ru/wp-content/uploads/2013/06/babaev.pdf>
14. **Харитонов Л.А.** Герменевтический подход к толкованию правовых норм // Криминалисть. 2011. № 1 (8), <https://cyberleninka.ru/article/n/germenevticheskiy-podhod-k-tolkovaniiyu-pravovyh-norm-1>
15. **Шамшурин В.И.** О политике, праве и религии (антропоцентризм в теории и практике). Часть 1, Серия "Политология. Религиоведение". 2010. № 2 (5), <https://cyberleninka.ru/article/n/o-politike-prave-i-religii-antropotsentrizm-v-teorii-i-praktike-chast-1>
16. The New Dictionary of Cultural Literacy. - Houghton Mifflin Harcourt, 2002. - P. 79. - ISBN 0618226478, ISBN 9780618226474

17. The Oxford English Dictionary / J. Simpson, E. Weiner (eds.). – 2nd ed. – United Kingdom, 1989.

Դատական գործեր

1. ՎԴ/6443/05/14 վարչական գործով 29.10.2015 թ. կայացված վճիռ,
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809879264
2. ՎԴ/14835/05/24 վարչական գործով 02.12.2024 թ. դիմումը
վերադարձնելու մասին որոշում,
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810010184
3. ՎԴ/2847/05/24 վարչական գործով 11.12.2024 թ. կայացված վճիռ,
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809995131

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НЕПОСРЕДСТВЕННОГО ПРИМЕНЕНИЯ ПРИНЦИПОВ АДМИНИСТРИРОВАНИЯ И АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА

Аннотация

В статье исследуется роль принципов права в административном праве с акцентом на их применимость в административном судопроизводстве. Анализируются теоретические и практические аспекты непосредственного применения принципов администрирования и административного производства, включая их правовую природу, нормативный статус и функции. Рассматриваются ключевые характеристики непосредственного применения принципов: комплементарность, нормативное превосходство, обязательность применения, гибкость и адаптивность. Особое внимание уделяется их значению для защиты конституционного права на надлежащее администрирование, устранения правовых пробелов и обеспечения единообразного правоприменения. Приводится анализ судебной практики, демонстрирующий актуальность принципов как инструмента юридической аргументации и интерпретации права. В статье обосновывается необходимость дальнейшей научной проработки механизма непосредственного применения принципов в административных процессах для повышения эффективности правоприменения и защиты прав лиц.

Ключевые слова: нормы-принципы, правоприменительная деятельность, непосредственное применение, правовая стабильность, обязательная юридическая сила.

SOME ISSUES OF DIRECT APPLICATION OF PRINCIPLES OF ADMINISTRATIVE ACTION AND ADMINISTRATIVE PROCEEDINGS

Annotation

The article explores the role of legal principles in administrative law, with a focus on their applicability in administrative court proceedings. Theoretical and practical aspects of the direct application of principles of administrative action and administrative proceedings including their legal nature, normative status, and functions are analyzed. The main characteristics of the direct application of principles are considered: complementarity, normative superiority, mandatory application, flexibility, and adaptability. Special attention is given to their significance in the protection of the constitutional right to proper administration, eliminating legal gaps, and ensuring uniform application of the law. The article includes an analysis of case law, demonstrating the relevance of principles as instrumentality of legal argumentation and interpretation of the law. The need for further scientific development of the mechanism for the direct application of principles in administrative processes is substantiated, aiming to enhance the effectiveness of law enforcement and the protection of individuals' rights.

Keywords: normative principles, law enforcement, direct application, legal stability, mandatory legal force.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.02.2025 թ., տրվել է գրախոսության 15.02.2025 թ., ընդունվել է տպագրության 27.02.2025 թ.:

1(118)2025

◆ ՍԵՂԵԿԻՍԻ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ